



Հաստատված է
ԳՊՀ գործառնական ստորոգրով 2006թ.
նոյեմբերի 2-ի թիվ 2 ժիստում
Ռեկտոր Ռ. Ա. Դակոբյան
«048» նոյեմբերի 2006թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ դրույթներ.

1. Սույն կանոնները կարգավորում են Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) տարածքում սովորողների (ուսանողներ, հայցորդներ) պահվածքի և վարվելաձևի (վարքագծի) հետ կապված հարաբերությունները:
2. Սովորողների վարքագծի կանոնները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, իրավական այլ ակտերով և սույն կանոնակարգով:
3. Սովորողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

II. Համալսարանի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները.

1. Համալսարանի ուսանողն իրավունք ունի՝

- ա) ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ,
- բ) հաճախելու կարողացվող դասախոսություններին, մասնակցելու գործնական, լսարանային և արտալսարանային աշխատանքներին,
- գ) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու համալսարանի ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին,
- դ) գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը, համալսարանի կառավարման մարմիններ ներկայացնելու ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ առաջարկություններ,
- ե) օգտվելու համալսարանի գրադարանից, մարզական և առողջարանային, մշակութային, տեղեկատվական ծառայություններից,
- զ) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկու որակավորման աստիճան,
- է) ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ՝ ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար,
- ը) սահմանված կարգով ընդգրկվելու համալսարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար մարմինների կազմում,
- թ) մեկ ուսումնական տարվա ընթացքում ստանալու առնվազն 7 շաբաթ տևողությամբ 2 արձակուրդ:

2. Արգելվում է ուսանողներին ուսումնական գործընթացով չնախատեսված աշխատանքներում ներգրավելը՝ առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգրողների և հոգաբարձուների) համաձայնության: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցների կիրառումն արգելվում է:

3. Համալսարանի ուսանողը պարտավոր է՝

- ա) սահմանված ժամկետներում կատարել ուսումնական առաջադրանքները,
- բ) տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին,
- գ) հաճախել դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին,
- դ) բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը,
- ե) պահպանել հասարակության բարոյական նորմերը,
- զ) պահպանել վարքագծի համապարտադիր նորմերը, դրսևորել պատշաճ վարքագիծ,
- է) սահմանված ժամկետում կատարել բոլոր հանձնարարությունները՝ ըստ ուսումնական ծրագրերի և պլանների, ձգտել իր մշակութային, բարոյական և ֆիզիկական մակարդակի բարձրացմանը,
- ը) դասի, քննության, ստուգարքի չներկայանալու դեպքում ոչ ուշ, քան հաջորդ օրը տեղյակ պահել այդ մասին ֆակուլտետի ղեկանատ, յոթօրյա ժամկետում հիմնավորել անհարգելի բացակայությունը՝
- թ) Համալսարանի բուժօժանայության կողմից վավերացված տեղեկանքով կամ հավաստող այլ փաստաթղթերով,
- ժ) չուշանալ դասերից և լինել լսարանում մինչև զանգը հնչելը, չխանգարել դասապրոցեսի բնականոն ընթացքը,
- ժա) ուսումնական ծրագրով նախատեսված դասերից խմբակային փախուստ չկազմակերպել և չիրականացնել,
- ժբ) խնամքով վերաբերվել համալսարանի շենքերին, ուսումնական գույքին,
- ժգ) համալսարանի տարածքում և շենքում պահպանել պատշաճ մաքրություն, դասապրոցեսի ընթացքում՝ լռություն, չաղմկել դասամիջոցին,
- ժդ) հետևել անվտանգության կանոններին,
- ժե) ժամանակին և ճիշտ կատարել համալսարանի ղեկավարության կարգադրությունները,
- ժզ) հարգալից վերաբերվել աղմինիստրացիայի դիտողություններին,
- ժէ) պահպանել սույն կանոնակարգի կանոնները:

4. Համալսարանի ներսում չի թույլատրվում՝ դասի ընթացքում (լսարանում կամ լսարանից դուրս) օգտվել բջջային հեռախոսներից, ծխել, ալկոհոլային խմիչքներ օգտագործել:

5. Ուսանողների նկատմամբ կիրառվում են հետևյալ տույժերը՝ ըստ նրա կատարած արարքի բնույթի՝

- 1) գրավոր զգուշացում,
- 2) նկատողություն,
- 3) խիստ նկատողություն,
- 4) հեռացում,
- 5) ուսանողական նպաստներից զրկում՝ այդ ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով:

6. Ուսանողը կարող է հեռացվել՝

- 1) ակադեմիական անբավարար առաջադիմության դեպքում՝ ըստ սահմանված կարգի,
- 2) ուսումնական գրաֆիկը չկատարելու, ակադեմիական արձակուրդից ժամանակին չվերադառնալու դեպքում,
- 3) ուսման վարձը չվճարելու կամ պայմանագրային այլ պարտականությունները չկատարելու դեպքերում,
- 4) դասերից անհարգելի բացակայելու դեպքում:

7. Համալսարանի ներքին կարգուկանոնին չհետևելու դեպքում սովորողների նկատմամբ կիրառվում են հետևյալ տույժերը՝

- 1) 18-ից մինչև 36 ժամ անհարգելի բացակայելու դեպքում՝ գրավոր զգուշացում,
- 2) 38-ից մինչև 72 ժամ անհարգելի բացակայելու դեպքում՝ նկատողություն,
- 3) 74-ից մինչև 102 ժամ անհարգելի բացակայելու դեպքում՝ խիստ նկատողություն,
- 4) 104 և ավելի ժամ անհարգելի բացակայելու դեպքում՝ հեռացում,

- 5) ուսումնական ծրագրով նախատեսված դասերից խմբակային փախուստ կազմակերպելու և իրականացնելու համար՝ խիստ նկատողություն,
- 6) համալսարանի տարածքում (բացառությամբ այդ նպատակով նախատեսված հատուկ վայրերից) ծխելու դեպքում՝ խիստ նկատողություն, իսկ կրկնվելու դեպքում՝ հեռացում,
- 7) ալկոհոլային խմիչքների ազդեցության տակ գտնվելու դեպքում՝ հեռացում,
- 8) հասարակական կարգի զանգվածային խախտումներ, հրահրումներ կազմակերպելու, մասնակցելու, ինչպես նաև անբարո արտահայտություններ օգտագործելու դեպքում՝ ընդհուպ մինչև հեռացում,
- 9) ուսումնական սարքավորումները և այլ գույքն անբարեխիղճ օգտագործելու և առանց թույլտվության համալսարանի տարածքից դուրս բերելու դեպքում՝ խիստ նկատողություն կամ հեռացում՝ գույքի արժեքի կրկնակի վերականգնմամբ,
- 10) համալսարանում սահմանված կարգերով նախատեսված այլ դեպքերում:
8. Սույն կանոնների 6-րդ կետում նշված տույժերը կիրառվում են ըստ կատարման հանգամանքների և անձի մինչ այդ ցուցաբերած վարքագծի:
9. Բոլոր տույժերը կիրառվում են Համալսարանի ռեկտորի հրամանով՝ համապատասխան ֆակուլտետի ղեկանի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, պատասխանատու անձի զեկուցագրի հիման վրա:
10. Մինչ տույժի կիրառումը սովորողից պահանջվում է գրավոր բացատրագիր: Բացատրագիր տալուց հրաժարվելը չի կարող խանգարել տույժի կիրառմանը:
11. Կարգապահական տույժի կիրառման հրամանը տրվում է կարգապահական կանոնների խախտում հայտաբերելուց հետո եռօրյա ժամկետում՝ տեղեկացնելով սովորողի ծնողներին: Հրամանից կամ կարգադրությունից քաղվածքը պահպանվում է սովորողի անձնական գործում:
12. Կարգապահական տույժի կիրառումը կարող է բողոքարկվել Համալսարանի ռեկտորին՝ մեկ շաբաթվա ընթացքում՝ հիմնավոր փաստարկների դեպքում:
13. Ռեկտորի հրամանը հրապարակվում է Համալսարանի ռադիոհանգույցով կամ փակցվում է հայտարարությունների տախտակում նույն օրը:
14. Սույն կանոններով նախատեսված կարգապահական տույժերը՝ բացառությամբ հեռացումը, համարվում են մարված՝ տրվելուց հետո վեց ամսվա ընթացքում: